

Արմատատը տեղեկատվություն է ներկայացնում 2019 թվականի հունվար-հոկտեմբերի (այդ թվում՝ հոկտեմբերի) երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2019 թվականի հունվար-հոկտեմբերի արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները

	Չափի միավոր	2019թ. հոկտեմբեր	2019թ. հոկտեմբերը 2018թ. հոկտեմբերի նկատմամբ, %	2019թ. հոկտեմբերը սեպտեմբերի նկատմամբ, %	2019թ. հունվար-հոկտեմբեր	2019թ. հունվար-հոկտեմբերը 2018թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ, %
Տնտեսական ակտիվության ցուցանիշը	%	x	107.7	95.3	x	107.1
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	մլն.դրամ	198 954.6	102.7	108.8	1 643 399.7	108.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը ¹	մլն.դրամ	x	x	x	x	x
Շինարարության ծավալը	մլն.դրամ	44 474.0	105.1	102.0	296 309.9	104.5
Առևտրի շրջանառությունը	մլն.դրամ	288 510.7	110.2	98.3	2 566 341.1	108.9
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	մլն.դրամ	193 416.4	112.4	100.4	1 670 266.0	115.1
Սպառողական գների ինդեքսը	%	x	100.9	100.6	x	101.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	մլն.կՎտ.ժ	603.0	92.3	93.8	6 253.6	97.3
Միջին ամսական անվանական աշխատավարձը ²	դրամ	179 415	106.0	100.6	178 714	105.9
Արտաքին առևտրաշրջանառությունը	մլն.դրվար	768.0	111.0	100.1	6 417.9	106.5
	մլրդ.դրամ	365.8	x	x	3 083.6	x
այդ թվում՝						
արտահանում	մլն.դրվար	233.8	101.3	95.6	2 145.1	107.2
	մլրդ.դրամ	111.4	x	x	1 030.6	x
ներմուծում	մլն.դրվար	534.2	115.8	102.1	4 272.8	106.2
	մլրդ.դրամ	254.4	x	x	2 053.0	x

¹ Այսուհետ սույն ցուցանիշը, համաձայն «2019 թվականի վիճակագրական ծրագրի» Հավելված 1-ի, 1. Իրական հատվածի, 1.2 Արտադրություն (ծառայություններ) ենթահատվածի, 1.2.2 Գյուղատնտեսություն և ձկնորսություն ոլորտի, տող 29-ի ծածկագիր 122029-ի, հրապարակվելու է միայն եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրանքի արտադրության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության համահարթեցման անհրաժեշտությամբ: Սույն մոտեցումը կիրառվում է միջազգային վիճակագրական պրակտիկայում: Այսպես, համաձայն Եվրամիության «Վիճակագրական պահանջների կոմպենդիում, 2018»-ի «3.1.2. Գյուղատնտեսության վիճակագրություն» ենթակետի, Եվրամիության անդամ երկրներում գյուղատնտեսության վիճակագրության հրապարակումները կրում են տարեկան պարբերականություն (հղում՝ <https://ec.europa.eu/eurostat/documents/3859598/9393837/KS-GQ-18-009-EN-N.pdf/a1d2ffe9-2ba9-4b57-8e6c-6c13575ef072>, 132-141 էջեր, հրապարակված 2018թ. հոկտեմբեր, ԵՄ, Լյուքսեմբուրգ):

² Գնահատական